

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՏԱՆԻ

Տարեկան . . . 12 Ժր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Նր՛իւ քիւ միկ ծաւով

Տարեկան . . . 14 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօլար «

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցմանս սողը
20 սանիքով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Գ Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՌՆՆ ԶՈՐԵՓԵԱՐԻՔԻ ԵՒ ՇԱԲԱՏ

Գրութեանը եւ լեկ
տրութիւնը

ՀԱՍՏԻ

Redaction du journal

Ir. vounk

VARNA (Bulgarie)

Редакция

НАВѢСТНИКЪ

Иравунк

VARNA

ՃԵՅՍՍ ՊՐԱՅՍԻ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ ակադեմիոյ գէմքերէն եւ Բարլըմանի մէջ հայ դատի գլխաւոր ախոյեաններէ մին Բրոֆէսէօր ձէյմա Պրայս Ամիրիկա դացած ըլլալով, Պոստօնի մէջ իրեն ի պատիւ երեկոյթ մը արուած է նոյն 2 րէն : Այս առթիւ հայաստանի քաղաքացիներէ մեկ նկատմամբ հետեւեալ խօսքերը արտասանել 350 ի չափ հայաստան Ամիրիկացիներու եւ Հայերու ներկայութեան : Բրոֆէսէօր ձէյմա Պրայս եւրոպացիներու մէջ Հայը եւ հայկական դատը է՛ն լաւ ուսումնասիրողներէ մին ըլլալով, իր յայտնած սա կարծիքները հետաքրքրական կը գտնենք մեր ընթերցողներուն :

Արեւելեան քրիստոնեաներու վիճակը երկար տարիներէ ի վեր ամօթ ու նախատինք մը եղած է եւրոպային եւ մանաւորդ այն վեց եւրոպական պետութիւններուն, որոնք գրեթէ երեսուն տարի առաջ թիւրքիայէն խոստում ստացան բարեկարգելու քրիստոնեայի ցեղերու վիճակը : Թիւրքաց Սուլթանը ո՛չ ուզած, ո՛չ չափաւոր ձեռնարկներու իր խոստումը :

Հայերը բնածին կարգաւորութեամբ օտուտած ժողովուրդ մ'են, եւ գիտական ու գրական մշակական մեծ ընդունակութիւն մ'ունին, ինչպէս եւ վաճառականութեան : Ասոնք հինգ պատմութիւն մը ունին, որի ընթացքին մէջ գէպի քրիստոնեական հաւատքը եւ իրենց ազգային կեանքներն ցոյց տուած են անհուն կորով մը ու հաւատարմութիւն :

Անոնք անիրաւարար տանջուած են եւ դեռ կը տանջուին թիւրքերէ, որոնք ոչ միայն իրենց պաշտօնեայնորդ վատ կը վարուին, Հայոց հետ, այլ եւ աւազակ Բիւրտերը կը գրգռեն հարուածելու Հայ գիւղացիները, անպաշտպան թողլով այս անմիկ ժողովուրդը եւ թոյլ չը տալով որ Հայերը զէնք կրեն ինքզինքնին պաշտպանելու համար :

1895-96 ի սարսափելի ու անտեղի կոտորածներուն ատեն, որոնք նախապատրաստուած էին Կ. Պօլսի մէջ, 100,000 քրիստոնեայ հայեր կոտորուեցան :

Միշտ վտանգ կայ որ այդպիսի կոտորածները վերանորոգուին : Հայաստանի վերջին գէպքերը նորոգած են մեր սարսափը եւ ի նկատի ունենալով անցեալ տարուայ թիւրքական խռովութիւնները Մակեդոնիոյ մէջ, գիւրին է երեւակայել թէ ինչե՛ր չէ կարելի սպասել :

Վերջերս նոր ոյժերով փորձեր կը ըլլան Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ՝ ստիպելու իրենց կառավարութիւնները գործնական ճշնշուններ բանեցունելու համար թիւրքիոյ վրայ, հայ ազգի մը նացեալ մասը բնաջնջումէ ազատելու եւ Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ ձեռք բերելու համար : Բայց ցաւ ի սիրտ կը սենք թէ Ռուսիա եւ Աւստրիա ետ քաշուած են քանի մը պատճառներով՝ որոնք չառ երկար պիտի ըլլար հոս բացատրելը :

Շատ փափաքելի է որ Միացեալ Նահանգները իր ազդեցութիւն ի գործ դնեն ի նպաստ այս ապերժանիկ ժողովուրդներու : Թէ ինչ տեսակ պիտի ըլլայ ձեռք միջամտութիւն, ինձ, որպէս օտարականի մը, չի յնար թելադրութիւններ ընել, բայց շատ որոշ է որ ամերիկական գոյեմներու ու միախօնարներու պաշտպանութիւնը իրաւունք կուտայ ձեռք այս խնդրոյն մէջ :

Եթէ Ամերիկայի ժողովրդի շնորհ, հաստատ ու որոշ համակրութիւնը յայտնուի արդարութեան ու մարդասիրութեան համար ի նպաստ Արեւելքի, այդ պիտի սարսափահար ընէ թիւրքերէն եւ պիտի զօրացնէ այն ձեռները — այժմ բաղմամբ ու հետզհետէ շատցող — որոնք արեւմտեան եւրոպայի մէջ կը տրիպեն իրենց կառավարութիւնները, որ էն ազգու միջոցները ձեռք առնեն այս խնդրին ներկայումս :

Բրիտանական եւ ֆրանսական

կառավարութիւնները գիտեն թէ ինչ բան ընել անհրաժեշտ է եւ իրենք գործնական քայլեր առնելու հակառակ չեն, բայց անոնք պէտք ունին խթանի, եւ այն երկու տէրութիւնները, որոնք անտարբեր կը գտնուին այս պահանջին նկատմամբ, պէտք է որ խայտառակուին իրենց բռնած այս բրտացեալ խիւրքին համար :

Ամեն ոք գիտէ թէ ինչ որ Միացեալ Նահանգները պիտի ընէ, պիտի ըլլայ անաչառ ու անհախախտ յոգով մը : Եթէ Ամերիկայի ժողովուրդը կրնայ հասկնալ բոլոր իրողութիւններն իրենց սե գոյններով, հոս ցատու միտ ընդհանուր ազգային ըզզացման պոռթկում մը պիտի յառաջ գայ եւ անսահման արժէք մը պիտի ունենայ անոնց համար, որոնք եւրոպայի մէջ պաշտպաններ հանդիսացած են արեւելեան քրիստոնեաներու դատին :

Բանի մը խօսք կուզէի հայոց ուղիւ, աւելցուց Բրոֆ. Պրայս : Ըսէ՛ք փոքր-Ասիոյ մէջ ապրող ձեր դժբաղդ հայրենակիցներուն որ համբերութիւն ունենան, գէպքերը միշտ այս դրութեան մէջ չեն մնար, եւ չեն կրնար ալ մնալ : Որեւէ յեղափոխական ցոյց թիւրքիոյ մէջ նպաստաւոր չէ ձեր դատին եւ ես կը հաւատամ թէ այս բազմութեան մէջ չկան այնպիսիներ, որոնք կը քաջալերեն յեղափոխական կոչուած ցոյցերը : (*)

(*) « Արմէնիա » ի դրկում նամակէ մը կարտատպենք մենք այս ատենախօսութիւնը, որուն սա տողերը կցած է Տ. Փոթթուզլեան իր կողմէ :

« Եփթութեան տեղի չորուելու համար կուզենք ճշգրիտ այս կէտ : Յեղափոխական շարժման դէմ չենք մենք, ընդհակառակ, կըսենք թէ անուղղայ թիւրք բռնապետութիւնն անհրաժեշտ կը զարձուէ յեղափոխական գաղափարի տարածումը : Միայն թէ մեր ժողովուրդը յաջող յեղափոխական շարժման մը համար զիտ պատրաստուած չէ ո՛չ նիւթապէս եւ ո՛չ բարոյապէս [այսինքն իր զգացումներով եւ

հասկացողութեամբ] : Բայց թիւրք կառավարութիւնն որչափ սաստկացնէ իր հարստանալու թիւնները, այնչափ աւելի պիտի փոթացունէ այդ պատրաստութիւնն : »

ԶՄԵՌ

— (o) —

Գիտե՛ս թէ ինչ ունի քա՛րին, իր ամենի մեղքն ինչն է մէջ, որ գուրը չնշապառ կընէ անցորդը, ու կը զարհուրեցնէ քեզ՝ սենեակիդ պատուհանը կատաղութեամբ ծեծելով :

Բայց գիտե՛ս դուն թէ ինչ ըրաւ աշնան հովը հայրենիքիդ մէջ, ո՛վ տարագիր, հալածական : Անկա քու հաղարաւոր մարտիրոս եղբայրներուդ մահը շնչեց, ու բոլոր միւսները, որ փախան եւ փրկուեցան մահուան ճիւղաներէն, դողացող իր մահաբոյր շունչովը :

Նահատակ եղբայրներուդ ու քոյրերուդ համար պարտք կատարեցիր արդէն, գովեցիր զանոնք, ինչու որ ըրին ինչ որ կուզէիր ընել դուն, խօսեցար ատոնց վրայ, որովհետեւ ինչ յարմարագոյն նիւթ կար խօսելու ու լացի, զի մահաւանդ լալ պէտք էր . . .

Հիմայ քամին իր վայրենի մոլուցքին մէջ անագորոյն հեգնանքն ունի միւս ապրողներուն վրայ, անոր համար որ անոնք ապրիլ կուզեն, ինչ որ դուն ալ կուզես, բայց ապրելու համար էն անհրաժեշտ բաներէն այսինքնն սնունդէ, հագուստէ ու պատրասարանէ զուրկ են :

Ինչ կը խորհիս ատոնց համար, առաջին օգնութիւնները կուգան արդէն օտարէն : Ինչի՞ կը սպասես դուն գովելու, խօսելու . . . թէ լալու նորէն . . .

Կ.



ՆՈՐ ՓՈԽԱՌԻԻԹԻԻՆԸ

Ահաւաստիկ քանի մը տեղեկութիւններ նոր կնքուած Պուլկարական պետական փոխառութեան մասին :

Նոր փոխառութեան անուանական արժէքն է 100 միլիոն լիւ 5 առ հարիւր տոկոսով :

Վճարածաճիւն է 50 տարի , պարտատուներուն 6 ական ամսական վիճակահանութեամբ : Առաջին վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Սօֆիայի մէջ 1 նոյեմբեր 1905 ին :

Բարիքեան եւ Հոլանտական դրամատուներուն պիտի յանձնուի պարտատուներու տոկոսին ու անոնց վիճակահանութեան վճարման հոգը :

Փոխառութիւնը երաշխաւորուած է մասնաւորապէս

ա) զբոշմանով թողի տուրքով
բ) ծխախոտի «պանտերոլի» տուրքին , 1902 ի փոխառութեան պէտքերն համար հարկ եղած գումարը քաշելէ յետոյ , մնացեալ հասոյթով :
գ) յաւելուածաբար ծխախոտի «միրուրիլէ» տուրքին հասոյթներուն մէկ մասով :

1904 1/4 հոկտեմբերէն սկսեալ, զբոշմանովի հասոյթը պիտի յատկացուի 1904 տարուան 5 առ հարիւր փոխառութեան արժէքով զփութու տեսարց հաշուոյն :

Դրոշմանովի թողի «պանտերոլ» ներուէն նման , թափանցիկ թուղթէ շինուած պիտի ըլլան , ու պիտի գնուին արժեւորագր պատուիրակին միջոցով : Անոնք արտասահմանի մէջ պիտի տպուին փոխառութեան զբաղման հաւանութեամբ եւ Պուլկարական կառավարութեան հակակշիռն տակ ու պիտի զրկուին վերոյիշեալ պատուիրակին :

Սօֆիա հասնելէ յետոյ , զբոշմանովի թողի կառավարական պաշտօնէին ու արժեւորագր Պատուիրակին ներկայութեամբ պիտի զոգուին այս վերջոյն ցոյց տուած անտուկներուն մէջ :

Անոնց փոխադրութեան ու տրապազութեան բոլոր ծախքերը պուլկար կառավարութեան հաշուոյն են : Դրոշմանովի թողի գումար պիտի հանուին միայն դրամի փոխարէն : «Պանտերոլ»-ի ու «միրուրիլէ» վաճառումէն զոյացած դրամը Պատուիրակը պիտի զրկէ Բարիքեան ու Հոլանտեան դրամատանց :

Փոխառութեան Պուլկարական ազգ. դրամատունը իրեն կառնէ 17 միլիոն լիւ-ի արժեքով թու երկրագործական դրամատունը 8 միլիոնի :

25 միլիոն լիւ պիտի մնան փոխառութեան Բարիքեան ու Հոլանտական դրամատան դրամաւորէն մէջ , վճարելու համար Շնայտի եւ ընկ . Գործարանին հայթայթելիք դաշտային թնդանօթներուն եւ անոնց վերաբերեալ ռազմանիւթներուն արժէքը :

Պուլկար կառավարութեան կը արուի 15 միլիոնի կանխավճար մը եւ ինքնաշարժի պէտքերուն համար : «Պանտերոլ»-ներու վաճառումին գործողութեանց ճշգրտութիւնը ապահովեցնելու համար փոխառութեան դրամատունը իբր երաշխաւորութիւն , մէկ միլիոն լիւ վար կը դնէ :

Մինչեւ երկու տարի , կառավարութիւնը չի կրնար ուրիշ փոխառութիւն կնքել , առանց իր նոր պարտատեարց հաճութիւնը առնելու :

Փոխառութեան 20 միլիոն լիւ պիտի գործածուի Թրինով-Քրէվնա եւ Բատովի-Քրէվնա տեղի գինիներուն շինութեան համար : Փոխառութեան զբաղմանը այդ գումարը վար պիտի դնէ վճարելու համար այն ընկերութեան , որ այդ գինիները պիտի շինէ :

Կառավարութիւնը տարեկան 30 հազար լիւ կուտայ իբր թոշակ պատուիրակին ու անոր պաշտօնեաներուն : Կառավարութեան Պաշտօնեան պիտի հակակշիռէ Պատուիրակին գործողութիւնները :

Փոխառութեան շրջաբերութեան հանելու գինն է 82 առ հարիւր :

ՊՈԼԿԱՐԱՐԱՆԻ ԹՈՒՐԻՔԻՆ

Պուլկար կիւմուրներն թէ Դուրը վերջապէս իր որոշումը հաղորդեց Պուլկարական կառավարութեան : Եւ իրենէի նահանգին պուլկար դաղթականներու վերադարձի մասին : Այսչափ յետաձգում եղաւ մինչեւ նոր դժուարութիւններ ստեղծելու համար իշխանապետութեան եւ Թուրքիոյ յարաբերութեան մէջ :

Եւ իրենէի նահանգէն հինգ հազար փախստականներ շարքանիւրէ ի վեր կը սպասեն թուրք-պուլկար սահմանադիւրին վրայ առանց կարենալ արտօնութիւն ստանալու իրենց տունները վերադառնալու : Այս խնդրոյ մասին պուլկար նախարարութեան եւ Դրան միջեւ բանակցութիւնները առկա մնացած են : Թուրք կառավարութիւնը բնաւ հոգ չընէր վերջ մը տալու համար այս անստուգանքի եւ զրկանքին որուն մասնուած են խնդրագրովականները : 25-ը որ ահա հիմա ալ կը պահանջէ քրցուցակ մը պատրաստուի , որուն մէջ մանրամասն նշանակուին փախստականներու թիւը , անոնց թուրքիայէն մեկնելու թուականը , ծննդավայրը եւ այն : Այս վաւերացումը նախ պիտի ներկայանայ Սօֆիայի Օսմանեան Գոմիսիոյն , որ զայն քննելէ յետոյ պիտի զրկէ Դրան : Դաղթականներու վերադարձը չը պիտի արտօնուի , մինչեւ որ դուրը այդ հինգ հազար մարդիկը հաղորդութիւն ինքնակալ տայ :

Շատ իրաւունքով է որ պուլկար կառավարութիւնը թուրքիոյ այս նոր ձգտումը պարզապէս մեթոմ կը համարէ , որովհետեւ պահանջուած վաւերացումը նոյն իսկ հարեւանցի կերպով պատրաստուելու եւ պատասխան մը ստանալու համար ժամանակ պիտի անցնի յորում զաղթականները պիտի ստիպուին իշխանապետութեան մէջ ցրուելու եւ ալ եւ իրենց ծննդավայրը չը վերադառնալ : Նոյնպէս շատ արդարացի կերպով Պուլկար պուլկարական նիկայացուցիչ Տ. Նաչէվիչին հրահանգ տրուած է մեծ պետութեանց ղեկավարներուն կողմէ ուղղել : Որովհետեւ ոչ քաղաքական եւ ոչ իսկ տնտեսական տեսակէտով հոգը չէ որ թուրքիոյ մէջ պուլկար տարրը պահի եւ շատ տկարանայ այդ 5000 ին Պուլկարիոյ մէջ հաստատուելով : Դուրը ընդհանրապէս ամէն շահունք գաղթականները իշխանապետութեան մէջ հաստատուած տեսնելու , ան ալ եւս չը պիտի ունենայ Պուլկար մօտերը հազարաւոր ուղեւոր խոտկարներու տարր մը , պատրաստ վերսկսելու յեղափոխական շարժումը : Ներքին կազմակերպութեան մէկ նշանին վրայ Տ. Նաչէվիչի աղբուր գիմումները եւ պետութեանց միջամտութիւնը բաղ-

ձացուած արդիւնքը եթէ չընծայեն , շատ հաւանական է որ Սօֆիայի դահլիճը իր դիրքանագիտական գործակալը Պուլկար կառավարութեան ձեռքին տակ :

Ամէն պարագայի մէջ , ճիշդ է թէ Պուլկար կառավարութիւնը շարժել հարկադրուած է : Արդէն ընդգրկմանը կուտակուեցան երես-փոխան մը հարցապնդում մը ըրաւ Սօֆիայի մէջ բացատրութիւն պահանջելով Թուրքիոյ աննպաստ ձգտումներու մասին : Ստոյգ է որ Սօֆիայի մէջ առաջին գործերէն մէկն ըլլալով մեծամասնութեամբ մէկ միլիոն քր . լուսաւորել պուլկարական ապստամբութեան գոհներուն , ընդգրկմանը կուտակուեցան այնչափ շուտով պատահութիւն չպիտի ունենար Գաղթականներու վերադարձի հարցի մասին կռիւ մղելու : Եւ սակայն կը մնայ գրգռել ինչ-որ մը որ կրնայ կառավարութեան հակառակորդներուն գրգռման շատ մը պատճառներ հայթայթել :

Արդէն Դրան հանդէպ աղբուրնիւր մը բռնել անհրաժեշտ է , ինչ որ կատարելապէս յաջողեցաւ շատ անգամներ , — օրինակի համար զէս վերջերս ուսուցիչ Կէթէվի Թուրքիոյ պուլկարական վարժարաններու տեսուչ Նաուուիլ ձերբակալման առթիւ : Թուրք-Պուլկար կարգադրութիւնը կամ այսպէս կոչուած համաձայնութիւնը անիմաստ պիտի ըլլար եթէ չը յաջողէր ապահովել Թուրքիոյ պուլկարներուն «խաղաղ յառաջդիմութիւնը եւ միջազգային զանազաններով հաստատուած բարիքները» , ինչպէս որ հաստատուած է Սօֆիայի բացման գահաձագնի մէկ կարեւոր մասով : Իրաւ օսմանեան կառավարութեան հետ կնքուած կարգադրութեան հեռանկարներէ մինչեւ որ վերջին Զատիկ օրը Թուրք բանտերու գոհները զացուցան պուլկար բանտարկեալները ազատ արձակելու համար , եւ 14000 ի չափ զաղթականներու թոյլտուութիւն եղաւ իրենց տունները վերադառնալու : Կը մնան այժմ 5000 գաղթականներ որոնք կը սպասեն Արեւելեան Բուժէլի թրքական սահմանին վրայ , զանոնք խեղճ վիճակի մը մէջ հոն ձգել անգիմութիւն է : Բէթրովի կառավարութիւնը խաղաղութիւնը եւ ազգին կենսական շահերը պաշտպանելու հոգէն զատ պարտաւոր է ամէն տեսակ ճնշում բանեցնել Դրան վրայ , որպէս զի այս վերջինը գաղթականներու վերադարձը արտօնէ : Միշտ կարելի է յաջողիլ Թուրք կառավարութեան զննողութիւններ ձեռք բերելու արագ եւ ազգու գործողութեամբ մը :

Ս. Մ. Ս
(Գուռիէ Էօնօրէիէն)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻԻՆ

ՊՈԼԿԱՐԱՆԻ ԿՈՒԻԻԸ

Պուլկար 7 նոյեմբեր 1904

Առջի օր քաղաքիս ազգայնոց մէջ տմենադալակիւրի դէպք մը պատահեցաւ , զոր կուղեմ քանի մը ատոյով իրաւունքի ընթերցողաց հաղորդել : Ժամանակէ մը ի վեր հիւրարար քաղաքս գտնուող Միւլիսեանական պարտն մը Ս. Պ. հայ սրճարանի մը մէջ

իր մէկ քանի մը գաղափարակիցներուն հետ երբ կը խօսակցէր , երբ Դաշնակցականներ կանխատեսուէին սրճարանէն դուրս կը մտնէին ու նստելով կը սկսէին հոն գտնուողներուն խօսակցութեան խառնուիլ : Հիւր պարտնին Դաշնակցականներու գործերու վրայ նպաստաւոր կարծիք չը յայտնելը յարմար տոկիտ համարելով Դաշնակցականներէ մին յանկարծ բռնուցքի հարուած մը կուտայ Ս. Պ. ին , եւ երբ սրճարանը գտնուողներէն ոմանք Ս. Պ. ին պաշտպանութեան կը փութան , յարձակող Դաշնակցականը անմիջապէս իր վրայ պատրաստ ունեցած կուտ գործիքը քաշելով , միջամտողներէ մէկին գլուխը կը պատռէ : Ուրիշներ կը փութան անոր ձեռքէն այդ վտանգաւոր գործիքը առնել : Այդ պահուն միւս Դաշնակցականը վեցհարուածեալ մը հանելով երբ կրակ ընել կը սպառնայ , իրեն միջոց չը արուի որ զէնքը ձեռքէն կառնուի , այդ միջոցին Դաշնակցականներէ մէկին ալ գլուխը կը պատռուի : Վերջապէս երբ Դաշնակցականներ մէկէն վերսկսեալ կը ըլլուին ու ծեծուելով սրճարանէն դուրս կը ձգուին : Դուրս ձգուողները սուրբով քարանի մասած իրենց միւս ընկերները օգնութեան կը կանչեն , ստոնք կը հասնին , բայց կոյւր մեծ համամտութիւններ առնելէ առաջ , մօտերը գտնուող օստիկաններ ու սպաններ վրայ կը հասնին եւ կարող կը լլան կուտողները բռնել իրարմէ :

Իսկ ինչո՞ւր չը վերջանար : Պատահմամբ այդ սրճարանին դիմացի պանդիլը գտնուող նախարար Ս. Բէթրով իմաստով , քիչ յետոյ չորս օստիկաններով սրճարան կուտայ եւ կարգ մը ազգու խօսքեր ու յանդիմանութիւններ կուղղէ ընդհանրապէս հայութեան ընթացքին վերաբերմամբ : Նախարարին այդ խօսքերը ունկնդրող բոլոր հայերը ամօթի զգացումէն մինչեւ ականջներ կը կարմրին : Կանխատեսուած նախարարական եղող զաշնակցականներուն այս լրբութիւնն Պուլկարի բոլոր աղբարականութեան կողմէ կ'այպանուի եւ անով հայութեան պատիւը կարատաւորուի օտարներու առջեւ :

Ինչո՞ւր կառավարութեան ինչեւէ քանի թէ միայն դատավարութեամբ լինայ , որով միայն յանցաւորները եւ թերեւս հրահանգողներն ալ պատժուին : Բայց կասկած կայ թէ միջոցէ կառավարութիւնը կարող մը հայեր ալ իբր խոտկարներ արտաքսէ երկրէն , որովհետեւ յայտնի է թէ արդի նախարարութիւնը շատ ներդրումով աչքով չը նայիր լեզափոխականներուն , մասնաւոր չափերուն :

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

ԱՌ Պ . «ՍԱՐԱՍԱՓ»

Պուլկար 4 նոյեմ . 1904

Տեղւոյդ թերթերէ միոյն հոկտ . 6 1904 թիւ 659 ի մէջ «Սարասափ»-ը տարադրութեան տակ , Պուլկարէն թղթակցութիւն մը հրատարակուած էր : Պ. «Սարասափ» ին ով լինելը կարենալ հասկնալու համար , մեր պատասխանը ուղարկեցինք :
պ. «Սարասափ» իւր այդ թղթակցու-

թեանը մէջ տեղւոյն ազգային զոր-
մերը քննադատելով, խել մը բաներ
ալ տեղւոյն Հայ-Առեւտրական-Ըն-
կերութեան մասին գրած էր :

Անշուշտ պ. «Սարսախ»-ը ոսկորի
ցաւ ունի : Անիկա փոքրահէն վորնա-
ռեւելն ի վեր է, հոս պարսպ կը թա-
փառի : Եւ ինչու՞ պ. Արիւն արգելք
հանդիսացած է զինքը հաշուակալ ըն-
գութներու Հայ Առեւտրական Ընկերու-
թեան մօտ :

Շատ տեղ զարկու իւր դժբաղդ զը-
լուիւր պ. «Սարսախ»-ը բայց միշտ մեր-
ժուեցաւ : Նոյն բաղդին արժանացաւ
նաեւ վերոյիշեալ ընկերութեան մօտ :

Այսօր, իւր թուանաւոր ժանիքներով
զինուած, որեւի նման փայլող ճը-
մարտութիւնը ոտնակոխ ընկելով, կը
ձգնի վրէժ լուծել, բարոյական ոճիւր
գործելու աստիճան ստորնանայով :

Պ. «Սարսախ» ամօթը մոռցած իւր
թղթակցութեան մէջ կը գրուայ թէ
պ. Արիւն ու Բաքալաճեան տեղւոյն
զաղթականութեան արկնը մտնել ու-
զած են, խոչըր զեղծումներ կատարած
են, որոնք իւր թէ նոր եկող. խորա
զէտ հաշուակալին ջանքերով երեսն
ելած են :

Ամօթ. հազար ամօթ. խիստ մեծ
ամօթ :

Բայց ինչու պ. «Սարսախ»-ն յի-
շած այդ հաշուակալը քաջութիւն
չունեցաւ, յատուկ կազմուած քննիչ
յանձնարարի առաջ, պարզել փաստե-
րով իւր երեւակայութեանը մէջ
ծնունդ գտած զեղծումները ու չարու-
նակ իրեն եղած զիմուսներէ խոյս
առաւ :

Արգ. հրապարակաւ կը հարցնեմ,
պ «Սարսախ»-ին եւ Տիար հաշուակալ
Թորախանին թէ, երբ քննած, երբ
հաստատած են այդ զեղծումները, ինչ-
պէս ու ինչ գումարներ զեղծուած են :
Մարդ յիմար կամ ոճրագործ ըլլա-
լու է, այդքան ցինիկութիւն ցոյց տա-
լու համար. վատութիւնն զրպարտու-
թիւնը, կեղծիքն ու սուտն անգամ
մեր կարծիքով չափ մը սահման մը
ունենալու են :

Տեղւոյն առեւտրական ընկերութիւ-
նը չարուսակ ունեցած է կանոնաւոր
վարչութիւն, հսկիչ եւ քննիչ անգամ :

Ներ որոնց պարտքն է այդ կարգի
զեղծումներ զրայ ծանրանալ ու եթէ
երբ եւէ զեղծումներ եղած լինին, զա-
նոնք հրապարակել :—

Քննիչ յանձնարարութեամբ ընկերու-
թեան բոլոր գործառնութիւնները կա-
նոնաւոր գտած եւ իւր վաւերական
ստորագրութիւնները տուած է :

Գալով պ. «Սարսախ»-ի այն կէտին
թէ ընկերութեան անգամները միանա-
լով արտաքսել լծուած են զիս եւ Արի-
ւն. այս ալ այնքան խոչըր կեղծիք
մէջ որուն վրայ ծանրանալը աւելորդ
կը գտնեմ : Քանի, քանի անգամներ
ես հրաժարական մատուցած եմ ու
մինչեւ այսօր միշտ մերժուած է ու
ընդունուած չէ :

Պ. «Սարսախ» եթէ ձեռ թղթակցու-
թեան մէջ զրուածները իրողութիւններ
են, կը հրաւիրեմ ձեզ, որ ձեռ փաստե-
րով ու ձեռ իսկական գոյնով հրապա-
րակ ելլէք :

Հակառակ պարագային, միշտ թըր-
նելով, պիտի անցնինք քեզ նման
բախտախորհրդներու գրածներու վրա-
յէն :

Յ. ՊԱՆԱՃԵԱՆ

ԴԻՏ. ԽՄԲ. — Մեր քննիչները պի-
տի տայինք Շահառիքաց ընկերութեան
անդամներուն որ իրենց խնդիրը լիա-
զօր իւրաւարար տեսնի մը առջեւ
կարգադրելին փոխանակ հրապարակա-
յին անուարկութիւններու դիմելու :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Վառնայի ազգ. երկսեռ Վար-
ժարանին ի նպաստ հինգաթիւ գի-
շեր տեղի ունեցաւ թատերական
երեկոյթ մը Նաւէճոս Հայ դերա-
սանական խմբին կողմէ : Ներկա-
յացուած խաղն էր «Ջեռնածուն»
կամ «Յոփակեաց հայրը» բարոյա-
լից արամբ : Խաղը բաւական յա-
ջող անցաւ : Կարգադր. մասնախում-
բէ՝ որ գլխավորապէս Թաղականնե-
րէ կը բաղկանար ըստ երեկոյթին,
միայն երկու օրուան մէջ յաջողած
էր թէ՛ բաւական տոմսակ սպա-

ռել եւ թէ հարկ եղած կտրգա-
դրութիւնները ընել հանդիսական
ները գոհ ձգելու համար : Հասոյ-
թը 1000 Քր. ի չափ կը կարծուի : Տոմ-
սակներու գիններուն սղութեան հա-
մեմատելով թէ կարելի էր մին-
չեւ 1500 Քր. ֆրանք հասոյթ գոհացնել
բայց անպատու օգնութիւն բերածը
խումբին քաղաքս ժամանան օրը
չատ որոշ չըլլալուն պատճառաւ
կարելի չէր եղած քանի մը օր ա-
ռաջէն տոմսակներու վաճառմամբ
զբաղել : սակայն աւելի շահաւոր
պիտի ըլլար կը կարծենք եթէ ներ-
կայացուած շարքի մը յետագոյն էր
որով կարգադր. մասնախումբը մի-
ջոց պիտի ունենար բոլոր տոմ-
սակները սպառելու եւ այս անակ
տարին հաղիւ 1—2 անգամ ներկա-
յացող առիթէն կատարելապէս օգ-
տուելու : որովհետեւ գործը այն
աստիճան հաջնակի եկեր էր որ մաս-
նախումբը միջոց չէր ունեցեր ներ-
կայացման ծանուցումը հրատարա-
կութեան տալու չորեքշաբթի օրուան
տեղական թերթներուն :

—Նաեւ ուրախ ենք իմանալով
թէ Ռուսչուքի հայ երիտասարդաց
կրթչտակոն. խումբը՝ որ, ինչ-
պէս կը հաւատան, իր ձեռքին
մէջ բաւական զարգացած է, մաս-
նախումբին ունի Պուլկարաց յառա-
ջիկայ Ծնունդներն առիթը Վառնա
գալ եւ ի նպաստ տեղւոյն Ազգ.
երկսեռ Վարժարանին նուազահան-
գէս մը տալ : Խումբին ուսուցիչն է
Ռուսչուքի զինուորական նուազա-
ծունեքու ուսուցչապետը, որ սիրա-
յօթար պիտի ընկերակցի խումբին :
Ռուսչուքի երիտասարդութեան այդ
ինքնաբերական բարեհաճութիւնը տեղ-
ւոյն ազգ. վարժարանի 400 է աւե-
լի սաներու եւ սանուհիներու սը-
տերը կրթութեամբական զգացու-
մով պիտի զեղու :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Խրիմի թէոդոսիա քաղաքին
մէջ վախճանած է բնիկ Այն-
թապցի Տ. Արսէն քհն. Ման

դակունին, որ իր 12000 ռուպ-
լի հարստութիւնը կտակեր է
երեք հայ տղայոց դաստիա-
րակութեան համար :

—Այլ եւ այլ աղբիւրքերէ
վերջնականապէս կը հաստա-
տուի թէ Աղթամարի կաթո-
ղիկոսական տեղապահ Տ. Ար-
սէն վարդապետ Մարգարեանը
եւ իր քարտուղարը Քիւրտերէ
սպաննուած են : Պոլսոյ թեր-
թերը կաթողիկոսական Տեղա-
պահը յանկարծաւ հեղած է
գրած էին : Պատրիարքարանը
կտուց անապատի վանահայր
Տ. Յովսէփ եպ. Խաստեղեանը
հրաւիրած է Աղթամարի կա-
թողիկոսական Տեղապահի պաշ-
տօնին :

—Հապէշիստանցի Յովսէփ Գրի-
գորեան անուն Հայ ակնա-
վաճառ մը 80,000 գուրնէ աւե-
լի արժէք ունեցող ակնեղէն-
ներ սնուկի մը մէջ գրած
Բարիկ տանելու համար, Թրի-
եստէնէն Վիէննա ճամբորդած
ատեն երկաթուղիին տոմսակը
կորսնցնելով, կը ստիպուի վար
իջնել եւ նոր տոմսակ մը առ-
նել, բայց մինչեւ վերադար-
ձի ըրպէն կառախումբը ճամբայ
կելլէ, ու ինք կը մնայ կայա-
րանը. երկաթուղիի պաշտօնեա-
ները կը վստահացնեն թէ սըն-
տուկը չըկտրուիր : Բայց չի
ալ գտնուիր : Գրիգորեան 80
հազար գուրնի դատ բացած
է երկաթուղիի վարչութեան
դէմ :

—Կիլիկիոյ կաթողիկոսը պատ-
րիարքարանէ խնդրած է որ Կ.
Պոլսոյ մէջ պաշտօնավարող Սիսի
միաբան եկեղեցականներու անշա-
գիրներն հանուին իրեն հետ

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱՋԱՄԱԿԵՐ հանդէսէ)

Կաթողիկոսն իմացաւ, թէ Կարապետ ե-
պիսկոպոսն կամը չունի էջմիածին գալու եւ
Մակար վարդապետի այնքան երկար մնալը այն-
տեղ գուր էր, խոտիւ հրամայեց վերջինին
չուտափոխել վերադառնալ էջմիածին :

Ներսէս կաթողիկոսի էջմիածին մուտ գործած
միջոցին երկու անուանի եպիսկոպոսներ կային՝
Ղուկաս եպիսկոպոս եւ Յովհաննէս Շահաթումե-
ան : Արդարեւ ըստ ամենայնի արժանաւոր
եպիսկոպոս էր Շահաթումեանը, բայց Ղուկաս
եպիսկոպոսն ալ ուղղութեան մարդ էր : Կար-
նեցի Յովհաննէս կաթողիկոսի ժամանակի Սի-
նոդի անդամները վարժուել էին արեւող ուղու-
թեանը, կալապալներով եւ այլն : Ներսէսը
հնարին արձակեց եւ նորանց տեղ նշանակեց
Յովհաննէս եպիսկոպոս Շահաթումեանցին, Նի-
կադայոս եպիսկոպոս Տէր Մարուգեանցին, Մա-
կար վարդապետ Տէր Պետրոսեանցին, Սիմէօն
վարդապետ Փարաքսըզուն : Ղուկաս եպիսկոպո-
սը մնաց Սինոդի անդամ եւ կաթողիկոսի տե-
ղապահ. նոյնպէս արձակեց Սինոդի ատենադպի-

րին եւ նորը կարգեց, այնուհետեւ ինքը հե-
տամուտ եղաւ ամենայն ջանքով էջմիածին ե-
կամուտը անկողուտ ժողովի գանձարան, որ
համարեա դատարկ էր, Յովհաննէս եպիսկո-
պոս Շահաթումեանցին յանձնեց գանձարանը,
նոյնպէս սահմանեց վստակաւ կառավարութիւն
որի անդամներ կարգուեցին՝ Նիկադայոս եպիս-
կոպոս Տէր—Մարուգեանց, Գէորգ եպիսկոպոս
Աշտարակեցի, եւ Թադէոս եպիսկոպոս Բէկնա-
զարեանց, որոնց պարտքն էր հսկել Աթոռի
եղեւմուտքի վերայ. նախ քան Ներսէս կա-
թողիկոսը Սինոդն էր նշանակում Աթոռի ծախ-
սարաններ, որոնք շատ բան առում էին ի
հաճոյս եւ ըստ կամաց Սինոդականներին, ի վը-
նաս գանձարանի : Ներսէս կաթողիկոսը սահ-
մանեց եւ շտեմարանի ու մասանի չափ եւ կը-
շիւ, տալով ժապաւինեալ տոմարներ, եւ մեծ
ջանք գործ գրեց : որ միաբանութեան հացը
լաւ եւ մարդը պատրաստուի, նմանապէս մեծ
փոյթ ունեցաւ միաբանութեան ուղանի համար
ամենայն օր ճաշին եւ ընթրիքին չաթիւրը պի-
տի բերել միաբանութեան համար պատրաստած
կերակուրներէ մի մի բաժին կաթողիկոսին,
որ համը տեսնէր. եւ չաթիւրներին պատուե-
րել էր որ աշակերտներն առջեւէն վերցնեն կերա-
կուրն իրան բերելու եւ ոչ թէ կտթալից,
որ ջոկած չլինի : Շտեմարանապետ վարդապե-
տին, որ էր եւ փոխառան հացի վերակցու-
պարգեւատրում էր, երբ միաբանութեան հացը

սպիտակ եւ համեղ էր լինում :
Ներսէս կաթողիկոսն, երբ դեռ եպիսկո-
պոս միջոցին էջմիածին գլխավոր կառավարիչ
էր, սուրբ Գայիանէի վանքի մօտ անտառ էր
անկել տուել եւ նորան ոտոգելու համար փո-
ք լիճ էր շինել տուել. բայց էջմիածին
հեռանալուց յետոյ շատ շանցած անկած անտա-
ռը անխնայ կտրատոււմ են եւ վերջացը-
նում, իսկ լիճը քանդել է տալիս Յովհաննէս
կաթողիկոս կարնեցու ձեռնասուն Գէորգ եպիս-
կոպոս վեհապետեանն եւ սորառաջ քարերը
գործ է ածում իւր եղբոր. Եփրեմի տան
շինութեան համար : Պատմում էին միաբաննե-
րը թէ Գէորգ եպիսկոպոսը լճի քարերով չրա-
ւականալով Գառախ գետի վերայի ի նախնեաց
անտի կառուցած հին եւ հոյակապ հինգ աջա-
նի կամուրջի սրբատաշ քարերն էլ հանել եւ
տանել է տալիս զարձակ եղբոր տան շինու-
թեան համար : Այս կամուրջի հետքը կայ
մինչեւ այսօր եւ վկայում է իւր առա-
ջուայ հոյակապ շինութիւնն : Աթոռի անտառն
ներքի գոմբը շինուած էին յառաջգոյն ժա-
ռանգաւորաց ուսումնարանին շատ մօտ դէմ առ
դէմ փոքր տարածութեան վրայ :

(Շարունակելի)

միատեղ կիլիկիա վերադառնալու համար :

—Վենետիկի Միթիթարեաններէն Հ. Պողոս Վ. Գաթիթեան Ամերիկա գացած ըլլալով, տեղւոյն Առաջնորդին դիմած Հայաստանեայց եկեղեցւոյն գերկը ընդունուիլը խնդրած էր, Վեհ. Կաթողիկոսը այդ խնդրքը ընդունելու եւ այդ մասին կոնդակ մը զրկելու է Ամերիկայի Առաջնորդին :

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻԻՐԳԻԱ

Սթանպուլտան 10 նոյեմ. թարիխի պիւր թէլէկրաֆիէ պիւր տիրիտիկի իւզրէ, իւշ կիւն մուգատտէմ միւրալայ Արիֆ պէյ, ասքէրիյէ մէքթէպի միւտէրիւլէրինտէն պիւնպաշը հազար պէյ վէ տիկէր 20 զապիթլէր վէ մէմուրլար խուսուսի պիւր վաթորլէ եէմէնէ մէնֆի կէօնտէրիլիլէր: Պու զաթլար խաֆի մէճլիս իթմիշ օլմալարընտան տօլայը սիւրիւլիւշլէր :

—Մաքթիթիւս ժանտարմասը իշիւն ալթը ըուս զապիթլէր Սէլանիկէ եէթիշլիլէր :

—Իրէք սանճաղընըն աշվալը հազարէսինտէն տօլայը Աստրիա վէ Բուս էլիլէրի եէնիտէն Պապը Ալիին տըզգաթընը տալէթ իթտիլէր : Մէզքիւր սանճաղտա խալտլարըն ումումէն սիւրս թաշըմալարըն վէ խրիսթիանլարա իսէ սիւրս մէմնու օլմառըն վէ պունլարա ճէզա վէրիլմէսինէ գարշը էլիլէր ըրօթէսթ իթմիշլէր տիւր :

—Եունանիստանտա չէթալար թէշքիլինէ վէ Մաքթիթիւստա չէթալարա եարտըմ իշիւն սիւրս վէ սաիւրէ կէօնտէրիլմէսինէ գարշը Պապը Ալի ըրօթէսթ իթտի : Քէզա Եունան թիւրք սինօրը իւզէրինտէքի նօգթալարըն գուվլէթլէշտիլմէք իշիւն Պապը Ալի գարար վէրտի :

—Կիրիտ մէսէլէսինտէն տօլայը Պապը Ալի քէնտի էվրօլտաթի էլիլէրինէ պիւր սիւրքիլէր թէլէկրաֆի կօլլատը :

—Լօնտանտան իշար օլընտըլը իւզրէ, թիւրքիստա Աստուածաշունչ նէշր ու ֆիրուխտը հիւքիլմէթ մէնն իթմիշ օլմառընտան տօլայը ինկիլիզ վէ թիւրք հիւքիլմէթլէրի պէյնիտէ միւնազաա հուսուլա կէլմիշ տիւր :

—Սէլանիկտէն «Տընէվնիկէ» վէրիլէն մալիւմաթա նալարէն, մէզքիւր չէհրին պապը ըուս տիւքեանլարընտա ըուս չէթալարըն կէօնիւլիլէր եաղըմադտա վէ հէր պիւրինէ իւշէր լիւրա այլը թախսիս օլընմագտա վէպ ու մէպլաղ Եունան գօնսօլտընտան թէէմին օլընըր ըմըլ, Քէզա Մանաստըրտա աշ-

նը սուրէթտէ կէօնիւլիլէր եաղըլըր, վէ թիւրք հիւքիլմէթի կէօլ գարար ըմըլ :

—Սըրպ կազէթալարընա պիւնաէն, նոյեմ. 9 տա Վէլէս չէհրինտէ պիւր գարըշըլըզ զուհուր իթմիշ իսլամլար գաթլ օլընմըլ 10 իսլամլարըն գաթլիլէրի պուլլարլարըն զանն իսուպ թազմինաթ վէ թարզիլէ թալէպ իտէրլէր իմիշ : Պու սէպէպլէ Սըիւպտէն ասքէր եօլլանըլարազ չէհրի գօրտօն ալթընա ալընմըլ, չէհրէ կիւրմէք վէ չըզմագ մէնն օլընմըլ : Հիւրի բաշանըն վէ պիւր գաշ էննէպի մէմուրլարըն Վէլէսէ կիտէճէքլէրի միւրէվլի տիւր :

—Շալանըն էմիլիթ ինկիլիզ տէվաիւրինտէ զանն օլընտըլը իւզրէ, էկէր գօմիսիօնը մախսուսըն գարարընը Սուլթան թաստիգ իթմէպ իսէ ինկիլիթէրա ասքէր եօլլալուպ Ատէն էյալէթիւնն իւշըլէնիտէն թիւրք ասքէրլէրինն չըգարաճագ տըր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Ե

Ժէնէրալ Բուրօքիւնին իսալ խասթալընտան էօլմիւշ օլմա սընա տալիւր եէնիտէն շալէա զուհուր իթմիշ իսէտէ, պու տէֆա տախի ըուս մէնպասընտան նէշաթ իթմիշ օլտըլընտան ինանըլմազ :

—Թօքիօտան նոյեմ. 10 տա Լօնտըրայա պիւրիւրիտիկի իւզրէ, Բօրթ Արթուր հէր թարաֆտան եանմագտա ըմըլ էօլլէքի գալէնին էթարաթը վէ ասքէրիյէ թէրսանէլէրի ալէֆլէր իշիւնտէ ըմըլլար :

—Ժէնէրալ Չախարօֆըն ըաթօրթը իւզրէ, նոյեմ. 9 տա ճաթօնլար պիւր ըուս ֆըրգաթընա հիւճուս իտուպ, էհէմիլիյէթլի թէլէթիւրաթլէ կէրի սիւրիւլիլէր : Բուսլարտան 10 զապիթ վէ 30 ասքէր եարլէնմիշ վէ 10 նէֆէր էօլմիւշ :

Մանչուրիստաթի ճաթօն ասքէրլէրինէ գըլ էլպիսէլէրի եէթիւշլէ տիւր : հէր պիւր նէֆէրէ պիւր քիւրք գըլըրգ շաքա վէ 2 չիթթ ճիւլմէ թէվլի օլընմըլ, քէզա խաֆիֆ սօպալար եօլլանըլըր, վէ գար իւզէրինտէ եօլըլըզ իտէպիլմէք իշիւն գըզազլար սըբարիշ վէրիլմիշ :

—Պալթիկ տօնանմասը Բօրթ Սալիստէ եէթիւշլէ տիւր : Սուէզ պօղաղընտան կէչէճէկի էսնատէ պիւր վազաա զուհուր իթմէմէք իշիւն հէր նէվ ինթիյաաքեարի թէտպիլլէր էլէ ալընմըլ :

—Լօնտանտան պիւրիւրիտիկինէ կէօրէ Բօրթ Արթուրաթի ըուս մուհաթը ասքէրլէրի սէպաթ ու ճէսարէթտէն կիւնպէկիւն քէսիլմէքտէ իմիշլէր վէ

գաշաղլտըն մըդտաթը արթմադտա ըմըլ :

ՄԻԹԵՆԵՎՎԻԷ

Բէթէրսպուրկտան պիւրիւրիտիկի իւզրէ, Բուսիւնն թաշթը հիւքիլմէնտէ պուլլանն Բօլօնիա էյալէթիւնն թէշքիւրաթընը վէ արպուլարընը թէվլիշ իթմէք վաղիֆէզի միւսթէշար Հէլպէրթէ իշալէ օլընմըլ : Պու թէֆթիւրաթտան մագսէտ մէզքիւր էյալէթէ օթօնօմի վէ եալստ տահա սէրպէսթ պիւր իտալէ վէրիլմէք իմիշ : (Ինանմալըլ)

—Անարշիլթլէրի թաադիպ իթմէք իշիւն Սպանիա գրալը պիւր գանուս լաեհասի իսլալապը : Իշպու լաեհա մէճլիսի մէպուսանըն միւլէքէրէսինէ իհալէ օլընմագ տըր :

—Պուրկազտան ալըն պիւրիւնտէ վարնայա միւլթէվէտիհէն հալէքէթ իթմիշ օլան էլպիս նամ եուսան եօլը վաթօրը ֆուրթուսայա թուլթուլմուշ օլարագ զայպ օլմուշ ըտը : Պուրկազտան իսպար օլընտըլը իւզրէ, մէզքիւր վաթօր Իալնաթրա պուրնուստա գուսա օթուրմուշ վաթօրըն տիւրէքլէրի, տիւմէնի գըրըլմըլ վէ մաքիւնալար պօղուլմուշ :

Մէզքիւր վաթօրըն եօլըլարընը վէ սաիւրէ կէթիւրմէք իշիւն Պուրկազտան մախսուս պիւր վաթօր եօլլանըլմըլ տըր : Չաննա կէօրէ ինսան թէլէֆիւթը եօլ ըմըլ : Խաուարտիտէ օլան էլպիս վաթօրընտա 60 եօլըմ վէ 32 թալիֆէ վար ըմըլ :

ՍՕՆ ԹԻԼԵԿՐԱՖԻԱՆ

—Բօրթ-Սալիտ 12 նոյեմ.— Բուս տօնանմասը ինկիլիզ սէֆիլնէլէրինտէն սէլամլանտը : Տօնանմա պուրատան եալընըլ սու վէ մէքիւրաթ ալաճագ ֆադաթ քէօմիւր ալմայաճագ : Թաամտան սօնրա ալիւրալ Ֆալէքըն վէ ինկիլիզ գօմանտանը վիլիթալար մուգապէլէ իթտիլէր : Եալըն ըուս թօրթիլէօրլէր պօղազա կիւրէճէքլէր պիւր սաաթ սօնրա տիկէր վաթօրլար տախի կիւրէճէք տիւրլէր :

—Պէլկրատ 12 նոյեմ.— Նիկօթիւնտէ եիւզպաշը Նիքօլիշ տիկէր իքի զապիթլէրի եէնի գրալ խանէտանընա գարշը իսթիւրա թէշլիլ իթմէսինտէն տօլայը տէրտէսթ օլընտը :

—Լօնտան 12 նոյեմ.— Բուս շարգ օրտուկեանընտան 10 թարիլէ Բէյքըրէ պիւրիւրիլմիշտիւր : Սօն կիւնլէրտէ իքի օրտուկըն րահպէրլէրի պէյնիտէ պիւրմիւտալէպ վուգու պուլլուս : Ճաթօնլար Բուլթէլօլա նամ թէքէ եաղընընտա ալթը տագիգէ տէվամիտէն չէտիտ պիւր գալկատան սօնրա կէրի սիւրիւրիւլէր : Բուսլարտան 30 քիշի թէլէֆիւթ վար :

—Լօնտան 12 նոյեմ.— Վէլթըրլան իսպարը իւզրէ, Բուսիւնն 57 սէնէտէն էօտէմէք շարթը իլէ 1300 միլիոն ֆր. իսթիգրաղընը թէտալիլէ չըգարմագ իշիւն միւլէքէրէ իսթիւս պուլմադտա ըմըլ : Թուսլարտա 500 միլիոն Պէրլինտէ վէ 800 միլիոն Բարիկտէ թէտալիլէ չըգաճագ տըր :

Պէրլինտէն աճանս «Վօլֆ» ըուս իսթիգրաղընա տալիւր օլան հալաաթի թէքիլպ իտէյօր :

Սթանպուլ 12 նոյեմ. Լօյտ գուսանիստընն Կալիքսո նամ վաթօր Սիւրս վէ մուհիմմաթը հարպիլէ եիւքլէնմիշ օլարագ Եամպօ, Հօտէյտա (Արապիստան) վէ Պասրայա կիթմէք իշիւն տիւն պուրատան հարէքէթ իթտի :

Բուս թաթիւրգհանէսի Սինօթալալարընն էքսէրիսի վէ Բալթրիք պէյնիտէ իսթիւրաթը եֆքեար հուսուլա կէլմիշ օլտըլընտան բազար կիւնքի վէ աիւնքը վիւքէլա մէճլիսինտէ օլմէսէլէ հազգընտա միւլէքէրէլէր վուգու պուլլուս իսէտէ իթիւրաֆ հասըլ օլմամըլ տըր : Ծիկէր պիւր քէվալէթէ պիւնաէն, Սինօթալալարըն իլէ ուզլալմագ իշիւն Պապը Ալի Բալթրիքէ նասահաթ իտէճէք իմիշ :

Մաքթիթիւս ժանտարմասը իշիւն տիկէր տէվլէթլէր քէնտի զապիթլէրինն մըգտաթը արթըրմայաճագլարընա տալիւր չըգան հալաաթիս էսասաղ տըր : Իթալիա տահա 6 զապիթ, Փրանսա 3 վէ ինկիլիթէրա պիւր եօլայաճագ տըրլար : Պու խուսուստա պուստան էվլէլ Պապը Ալիյէ իսպար օլընմըլ տըր : պու եէնի զապիթլէրին մահէլի մէմուրիյէթլէրինէ եէթիւշտիւքտէն սօնրա Պապը Ալիտէն տիկէր թալէպլէր տախի օլաճագ տըր :

ՄԱՔՈՒՐ ԿՈՐԵԿԱԶՈՒՐ (Պ Օ Զ Ա)

20 երկար տարինքու փոռճալթիւնս համարձակութիւն կուտայ ինձ, ծանուցանել արգոյ լաճախօրընընտան ինչպէս ուրիշ տարիներ նաեւ այս տարի կը պատրաստեմ մաթուր, թարմ եւ համեղ կորեկի ջուր, սննդալար եւ ախորժիկ :

Ասամը-Համամի կից թիւ 577
ՏԱՔԵՍԵՆ ԵՒ ԸՆԿ :

ՈՐԱՀ ՊՈՒԿԱՐԻԱ

ՆԱՏԵԺՏՈՒ Հայ դերսիս իւմըլ այս գիշեր պիտի ներկայացնէ առաջին անգամ ըլլալով :

ՌՈՒՍ—ՃԱՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՄԷՋ ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ ՄԸ
Սրտաշարժ թատերախաղ երգախառն 3 արար եօգիւր եւ պօրիւր Օրգ . Գանալի Միշլայի եւ Պ . Յակոբեանի կողմէ

Վաղը Գիշեր պիտի ներկայացուի նոյնպէս առաջին անգամ ըլլալով

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐԸ
Թատերախաղ 4 արար

Одговорникъ А. Курбетянцъ
печатница «Взаимность» — Варна